ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/154

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, 10.06.2021թ. թիվ 26/26-1/9362-2021 գրությամբ «Կամի Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի 31.05.2021թ. Ե-191 գրության հիման վրա 10.06.2021թ. թիվ 26/26-1/9362-2021 գրությամբ նախաձեռնել է «Կամի Գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Կամի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Կամի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Կամի Գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/154 ընթացակարգի շրջանակներում 21.06.2021թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 31.05.2021թ. Ե-191 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նաախարարության և «Կամի Գրուպ» ՍՊԸ-ի /ՀՎՀՀ 00927968/ միջև կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-ԽՍ-ԽՍ-ԿԳ ծածկագրով պայմանագիրը, սննդամթերքի մատակարարման հետ կապված էական խախտումների հետևանքով, միակողմանի լուծվել է՝ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կողմից:

Կից ներկայացվում են անհրաժեշտ փաստաթղթերը /Որոշում միակողմանի լուծելու վերաբերյալ, պատասխանատու ստորաբաժանման արձանագրություններ, պայմանագիր/ նշյալ մատակարարին սև ցուցակում ներառելու համար»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/154 ընթացակարգի շրջանակներում 21.06.2021թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/154 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/154 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Կամի Գրուպ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ. կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Խ-ԿԳ» ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ առաջին մատակարարումը՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, հաջորդ մատակարարումները պատվիրատուի հայտի հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում մինչև 25.12.2021թ:

3. Պայմանագրի 8.1-րդ կետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 104-րդ կետի պահանջներին համապատասխան Պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվում է «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին:

4. «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը «Կամի Գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 25.05.2021թ. N 183 գրությամբ, հայտնել է հետևյալը. «Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Կամի Գրուպ» ՍՊԸ-ի միջև 29.12.2021թ-ին կնքված «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար աննդամթերքի մատակարարման ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Խ-Ս-Խ-ԿԳ ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Կամի Գրուպ» ՍՊԸ-ն չի կատարել կնքված պայմանագրով պարտականությունների ողջ ծավալը, համաձայն

որի «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը միակողմ լուծում է վերը նշված պայմանագիրը /չ/բ 49-աղ կերակրի/:»

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 26.05.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.06.2021թ. թիվ 26/26-1/9362-202 գրությունը, «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի 31.05.2021թ. թիվ Ե-191 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը

լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Կամի Գրուպ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ. կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Խ-ԿԳ» ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ առաջին մատակարարումը՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, հաջորդ մատակարարումները պատվիրատուի հայտի հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում մինչև 25.12.2021թ:

Պայմանագրի 8.1-րդ կետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 104-րդ կետի պահանջներին համապատասխան Պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվում է «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին:

«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը «Կամի Գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 25.05.2021թ. N 183 գրությամբ, հայտնել է հետևյալը. «Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Կամի Գրուպ» ՍՊԸ-ի միջև 29.12.2021թ-ին կնքված «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար աննդամթերքի մատակարարման ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Խ-

Ս-Խ-ԿԳ ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Կամի Գրուպ» ՍՊԸ-ն չի կատարել կնքված պայմանագրով պարտականությունների ողջ ծավալը, համաձայն որի «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը միակողմ լուծում է վերը նշված պայմանագիրը /չ/բ 49-աղ կերակրի/:»

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 26.05.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը***:

Ուսումնասիրելով գործում առկա նյութերը՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 26.05.2021թ. հրապարակված Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ 25.05.2021թ. թիվ 183 ծանուցման համաձայն՝ միակողմանի լուծվել է ***29.12.2021թ. թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Խ-Ս-Խ-ԿԳ»*** պայմանագիրը, մինչդեռ՝ սույն ընթացակարգի նախաձեռնման համար Պատվիրատուի կողմից որպես հիմնավորում ներկայացվել է 29.12.2020թ. կնքված թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Խ-ԿԳ» ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Կամի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից պարտականությունների չկատարումը:

Այսպիսով՝ գտնում եմ, որ 29.12.2021թ. թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Խ-Ս-Խ-ԿԳ» պայմանագրի լուծման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Կամի Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.06.2021թ. թիվ 26/26-1/9362-2021 գրությամբ «Կամի Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**